



Մ Մ Տ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Ի Ն Չ ՈՒ Կ Ը Կ Ա Ղ Ա Ն

Ս Բ Ո՛Ն Ք . . . աննը՝ որ սաքի կամ սրունքի պահատուխին մ'ունին: — Ոչ, շաա աղայական պիտի բլլար հարցումս . . . այլ աննը՝ որոնց սաքերնին ու սրունքնին քաջասող է, բայց կը կազան մաքուր, կը կազան գործերով: . . . Եւ այս կարգի կաղացողներուն ցանկը կը կազմեն, գրեթէ աւանց բացառութեան, մեր ազգային բոլոր գործիչներն, շուզերով խօսիչ ուրիշ ազգերու կաղացողներու մասին: — Մեր ազգին մէջ կը կազան (քամբաստանք չէ բրածս, այլ բանե-աստեկ է, օրաթերթերէ ամէն օր քարոզուած) պատրիարքարաններու գործերը, վանահաններու հաստատութիւնները, վարժարաններու վարչութիւնները, լրագիրներու և ուսու-

մնաթերթերու հրատարակութիւններն, գաղափարներ սարածելու համար կազմակերպուած գոյնզգոյն ընկերութիւնները, ընթերցարանները, գրադարանները, և զեռ ուրիշ շատ մը ... հրեր ու ... ներք. այս տարբերութեամբ միայն՝ որ անոնցմէ ոմանք մէկ ոտքէ կը կազան և ոմանք երկու ոտքով, ոմանք անզգալի և կամ թեթեւ տատանումներով, ուրիշներ ծիծաղ և արցունք միանգամայն շարժելու տաճուրթեամբ, և քիչեր ալ զզլիշ հակումներով, որոնք զիտողին սրտի բարեխմուսնք կ'ազգեն՝ թէ « Սէս պիտի ինկնան, ահա պիտի գլորին, ահա երկիր փռուին »:

Ինչպէս վերն ըսի՝ իրաց այս տխուր վիճակը իմ խօսքերս չեն որ կը ստեղծեն, այլ ամենուս ամենօրեայ տեսածն ու վկայածն է, որուն վրայ ամէնքնիս ամէն օր կը խօսինք, կը գրենք, կը բողբոջենք, կը ցատինք... և սակայն դարման ...

Էւ զարմանալին այն է՝ (ինչ որ՝ ըստ իս՝ խնդրոյն հոգեբանական երևոյթը կը կազմէ, և հետաքննելու էական կէտն է, ուսկից զուցէ յառաջ գայ ստույգ պարմանը), այն է զարմանալին, կը կրկնեմ, որ վերոյիշեալ ամէն տեսակ Հաստատութիւնները կազմակերպուած են այնպիսի անդամներէ, որոնք (բացասութիւնները չհաշուելով) առանձին առանձին նկատուած՝ երբեք կազազողներ չեն. ըսել կ'ուզեմ, իրենք իրենց անձնական վարչութեան մէջ գովելի սիպարներ են, իրենց ընտանեկան կառավարութեան մէջ օրինակելի կազափարներ են, իրենց մարդկային ընկերական յարակցութեանց մէջ նախանայելի կերպարանքներ կը ներկայացնեն մեր աչքին ... և սակայն երբ քովէ քով գալով՝ այս ինչ և կամ այն ինչ բարի նպատակի մը հասնելու համար՝ ոյժերնին կը միացնեն և ընկերակցութիւն մը կը կազմակերպեն, քիչ ասունէ վերջը այդ անձիւքն՝ իրենց ընկերակցական գործերուն մէջ կազազողներու զիբք կ'առնուն: ... Տէր Մարիոս սրբազանն ա՛յլ եւս այն անաչառ հոգեւորականը չ'երեւար, այլ կուսակցական միտումն ունեցող կը բարբատուի ... Հայր Կիրակոսն այլ եւս այն անձնանուէր և հեղահոգի արեղան չէ,

այլ շահակնդիր և կուսուր կը նկարագրուի ... Պր. Թորոսն այլ եւս այն ընտիր մանկավարժը չէ, որուն իւր զաւակաց տուած առանին կրթութիւնը՝ ծայրագոյն գերազանցութիւն մը (maximum) կը պատկերանար, այլ մերթ ապկկար և շփոթած, և մերթ ալ դիկտատոր և բռնաւոր մը կը հրատարակուի ... Պր. Թաղէոսն այլ եւս այն ազատ և ուղղամիտ մտածողն ու խօսողը չէ, այլ երկչոտ կամ քծնող կամ բանդագուշող հրապարակագիր մը կը տխրահռչակի ... Կարճ խօսքով, այդ յիշուածներուն և անոնց նմանաց վրայ՝ կը կատարուի աւելի անիմանալի և կամ տխրելի՝ ըսեմ՝ յեղափոխութիւն մը, քան ինչ որ բնութիւնն առկնելիս կը զնէ թիթեռնիկներու և գորտերու այլակերպութիւններով և կամ գեանադեմոններու (Caméleon) գունափոխութեանց մէջ: ...

Ինչու՞ ուրեմն այս այսպէս կ'ըլլայ ... Ինչու՞ այդ քաջոսն և ուղղութեանցները կը սկսին կաղալ: ... Չ'աժծեր որ վրանին ուշադրութիւնիս պարձրենք և քննասիրենք ... որպէս զի կաղալու պատճառները գտնենք և անհետացընենք:

\* \* \*

Ծ՛աղբրելի բան մը պիտի ըլլար՝ եթէ միաբն զնէի քանի մ'էջերէ ձեւացած յօլուածի մը ձեռքով Եղիպի յոյս (fiat lux!) ըսել. եթէ յաւակնէի այս բնդարձակ խնդրոյն ամէն խութերն ու խորշերը նշոււաւորել, ամէն մտթ խուերու մէջ պատաստուած և պահույնուած պատճառները՝ ակօնտկէեան ճառագայթներով որոնել և երեւան հանել: ... Ո՛չ, ոչ. այն բանն ընդարձակ հաստորի մ'արժանաւոր նիսթ է. իմ նպատակս է միայն՝ քննասէր զիտողներու և խորիմաց բարոյախօսներու ուշադրութիւնն հրաւիրել այս կէտիս վերայ, որպէս զի բացայայտեն խնդրոյս մթին կէտերը, ցոյց տան կազազողաց՝ ակամայ կաղաչուուն պատճառները. որով՝ եղած հաստատութիւններն ուղղելով՝ աւելի օգտաւէտ գործ մ'ըրած պիտի ըլլան՝ քան թէ նորոգ հաստատութիւններ կանգնելու ձեռնարկէին: Սակայն որքան ալ հնչակուած բարոյախօս մը չեմ և կամ սրակուտուած իմաս-

տասէր քննապատի մը տխուրը չունիմ, բայց պէտք էի բանականութեան աչքերով մտաւորական կուրուքեան մ'ենթարկուած ըլլալ, չտեսնելու կամ խելահաս չըլլալու համար այդ կաղաքմանց գլխաւոր և էական բնազդիւր պատճառի մը, ուսկից (կրնամ ըսել) բոլոր միւս պատճառները կը բխին և կը ճիւղաւորին, այսինքն է՝ մեր ազգին վերոյիշեալ և ուրիշ տեսակ տեսակ Հաստատութեանց և Ընկերակցութեանց կազմակերպութեան թերութիւնը, որ է ըսել՝ այդ հաստատութեանց հիմունքը քաջորոշ բացատրուած սկզբունքներու և ճշգիւ ու մանրամասն սահմանազօժուած կանոնադրութեան մը վրայ զետեղուած չըլլալը:

Մեծ իմաստասէր մ'ըլլալու կարօտութիւն չկայ՝ հասկնալու համար՝ որ երբ Հաստատութեան մը կազմակերպութիւնը կամ հիմնական սկզբունքներն իրենց սկզբնաւորութեան մէջ թերի են, այսինքն՝ համապատասխան չեն ըստ ամենայնի այն նպատակին՝ որուն կը դիտուի հասնիլ, և չեն զուսացնիր ու չեն լեցնեն ըստ ամենայնի այն ամէն կարօտութիւններն և պէտքերը՝ որ այդ Հաստատութիւնն ի բնէ կը պահանջէ, այդպիսի կազմակերպութիւն մ'արդէն որդն իր մէջն ունի, որ ժամանակի աւեղողութեան մէջ գինքը պիտի կրծէ, ծակծրիէ, փրտտեցնէ և ոչնչացնէ: ... Այո, այդպիսի Հաստատութեան մը քայքայումն և ոչնչացումը՝ անհրաժեշտ հետեանը մ'է, միայն թէ աւելի կարճատեւ կամ երկարաձիգ ժամանակի խընդիր է այդ տարրալուծումն և այդ մահը:

\*  
\*\*

Բայց կայ արդեօք Հաստատութիւն մը, պիտի Հարցընեմ ա ինծի և իմ ընթերցողներուս (եթէ կանխաւ ուշիմ ընթերցողք ինքերն և ինծի արդէն հարցուցած չըլլայ մտքէն), որ իրեն կազմակերպութեան առաջին կէտին՝ ամէն մանրամասն ազգայ պարագաներն՝ առաջուց դիտած կամ գուշակած ըլլայ, և այնպիսի Սահմանադրութիւն մը հաստատած, որուն այլ եւս պէտք չըլլայ ազգային մէջ ձեռք զգցրնել ու գանդկայ զարգացնելու ենթարկել:

Յոյս ունիմ որ չեմ սխալիր՝ երբ պատասխանեմ թէ չկայ, և աւելցնեմ նաեւ թէ չի կրնար այ ըլլալ, ինչպէս մինչեւ հիմայ ալ եղած չէ:

Որ և իցէ ընկերութեան Սահմանադրութիւն մը՝ իր կազմակերպութեան նպատակին հասնելու համար՝ առջեւնիս կը գնէ աւելի կամ նուազ թուով կրօնական և կամ բարոյական սկզբունքներ, որոնց վրայ կը հիմնէ իւր կանոնադրութիւնը կամ միճոնները, որոնց համաձայն պիտի գործեն այդ ընկերութիւնը կազմող անդամները: Այդ կրօնական և բարոյական սկզբունքներն, այո, անփոփոխ և անձեռնմխելի պէտք է մնան. զի անոնց փոփոխութիւնը՝ ընկերութեան նըպատակը, որ է ըսել իսկութիւնը՝ կը փոխէ. բայց այդ սկզբունքներուն վրայ պատաստուած կանոնադրական ճիւղերը՝ կրօնական և անհրաժեշտ պէտք են՝ դարբնու ընթացքին մէջ տարբեր ձեւերու տակ վերապատուաստուիլ իրենց բունը կազմող սկզբունքներուն վրայ, և կամ (մէկզի թողլով այլաբանական բացատրութիւնս) աւելի պայծառ ըսեմ, այդ սկզբունքներուն վրայ հիմնուած կանոնադրութիւնը կրնայ և անհրաժեշտ նարկ է՝ որ ժամանակի մէջ քարեփոխուի, զարգանայ, քերիւն չրացնէ և քարուստոր դարձածը յապաւն, առանց ձակայն աւելցնելու բան մը՝ որ հակառակի հիմնական սկզբունքին, և կամ յօտելու բան մը՝ որ այդ հիմնական սկզբունքին վրայ պատաստու մը չըլլայ, այլ անոր իսկութեան մաս մը կամ մասնիկ մը կազմէ. վասն զի այդ տեսակ հիմնախախտ երկու պարագայից մէջ ալ (թէ՛ յաւելման և թէ՛ յապաւման մէջ ըսել կրօնը), ընկերութեան նպատակը կամ մասնաւորապէս և կամ ամբողջապէս կը փոփոխուի, որ է ըսել՝ կամ՝ քայքայման և կամ ջնջման միջակի կ'ենթարկուի. որովհետեւ այնպիսի փոփոխութեամբ յառաջ կու գայ կամ՝ ոտն առ ոտն և կամ՝ արշաւաւոր ընթացքով ուրիշ ընկերութիւն մը, որ զուցէ թէ առաջնոյն անունը պիտակարար շարունակէ կրելու, բայց այլ եւս նոյնը չէ, տարբեր է՝ տարբեր սկզբունքի և նպատակի ծառայելով:

\*  
\*\*

Սկզբունքներն՝ ըստ՝ պէտք չէ փոխուին , բայց նոյն սկզբունքներու վրայ հաստատուած կանոնադրութիւնը պէտք է բարեփոխուի\* : Այս բարեփոխումն է արդէն՝ որ ընկերութեան մը կենդանութեան նշանն է . և առանց այդ ներքստակն ինքզինքը բարեփոխելու ձիւրքին և կարողութեան՝ որ և իցէ ընկերութիւն մը արդէն ժամանակին ընթացքին հետ՝ իր քայքայման և մահուան կը դիմէ :

Այդ բարեփոխուը անհրաժեշտ յարակցութիւն ունի մարդկային մտքի կամ գաղափարներու բարեփոխութեան հետ , որ դառուց ի գարս շարունակական ընթացքի մէջ եղած է և պիտի ըլլայ : Եւ յիշուի , ինչպէս կարելի է ըսել թէ Հին-Գարուց ժամանակի մարդ մը այնպէս կը մտածէր ու գործէր՝ ինչպէս Միջին-Գարու մէջ ապրողն և կամ Նոր-ժամանակի խորհողն : Կարելի է այսպէս ալ՝ առանց ուղիղ գատողութեան դէմ մեղանշելու՝ ըսել և ուզել որ 1900ի մարդը մի և նոյն գաղափարներով խորհի , գործէ և կառավարուի , ինչ օրէնքներով որ մտածեր , գործեր ու վարուեր են 1700ի , 1500ի , 1000ի , 500ի քրիստոնէական դարու մարդկներն , եւս առաւել նախընթաց դարերու հիմնադրուողք :

Եւ յիշուի , որ ընկերութիւն կամ ընկերական Հաստատութիւն այդ բարեփոխութեան օրինաց ներքեւ չէ՝ գրած ինքզինքը , որպէս զի իր սեռողութիւնն ապահովցնէ , և այս կերպով միայն կրցած է պահպանել իր այսօրուան գոյութիւնն . մինչդեռ այդ բարեփոխութեան իրենք զիրենք ենթարկել և յարմարել չուզող մեծ ու փոքր ընկերութիւնք՝ զիրենք կազմող անդամներէն ջախջախուեր ու ոչընչացեր են , սեղի տալով տարրեր կազմակերպութեան մը բնութեան :

Բոլոր Հին ազգաց և պետութեանց պատմութիւնները վկայ չեն այս իրողութեան . բոլոր Միջին-Գարու սովորոյթները նոյնը չեն հաւատեր . և այսօր իսկ մեր աչքին դիմաց չենք հանդիսատես ըլլար այս կամ այն հինօրեայ , զօրեղ համարուած և ընդարձակածաւալ մեծամեծ պետութեանց իսկ հետզհետէ քայքայման լուծման և անկման , և սեղի տալուն ուրիշ գաղափարներով կազմակերպուած վարչութեանց : Կը տեսնենք որ այդ լուծումն և այդ մահն՝ արտաքին բնութեանէ մը պատճառուած չէ , այլ նոյն իսկ այդ մեծ ընկերութիւնը կազմող անդամներէն , որոնք խօսքով և գրով ու գործով կը բողոքեն և կը պատերազմին այնպիսի կանոնադրութեան մը դէմ՝ որ իրենց մտքին հետ և հասարակ գարգացումը բրած չէ , որ կ'ուզէ 1900ի մարդիկը 1700ի կամ 1500ի ժամանակին օրէնքներով դեռ կառավարել , որ հետեւաբար չի կրնար գոհացընել յաւանակիս պահանջները :

Քաղաքական ընկերութիւններէն աչքերնիս վայրկեան մը դարձընենք կրօնական ընկերութեանց վրայ : Ըր կրօնական Հաստատութիւնն անշարժ մնացեր է իր նախկին օրինաց վրայ , և ժամանակին ընթացքին մէջ սեղի չէ՝ սուսած զանազան բարեփոխութեանց կամ յեղափոխութեանց , (ինչպէս ալ ուզէ մէկն անուանել այդ գործարուած փոփոխութիւնը) , և այդ կերպով այսօր իր գոյութիւնն և կենդանութիւնը կը շարունակէ : — Բնաւ մէկը . և այնպիսիք որ չեն բարեփոխուեր՝ կամ մեծեր են և կամ դեպ ի մահ կը քալին : — Անոնք իբր օրինակ՝ զանազան կրօնական Հաստատութեանց միջէն՝ ամենէն աւելի հսկան , իր զարաւոր կեանքով , իր յարաճուն զօրութեամբ , իր հանրածաւալ տարածութեամբ , ըսել կ'ուզեմ Քրիստոնէական ընկերութիւնը : Բայ ի այն կենսաբաւի աստուածաձիր զօրութեանէ՝ որ

\* Մտքի ծուռ մեկնութեան մ'առիթ չտալու համար՝ կը ստորագծեմ (չեղազրոյ) բարեփոխուի բառը : Կանգընելու համար թէ ի հարկէ բարեփոխութիւն մը չ'ըլլար՝ երբեք կանոնադրութեան մը փոփոխութիւնը ծառայէ ընկերութեան մէջ սեղի գտած զեղծմունքները

վաւերացնելու . այլ այն ժամանակ միայն կանոնադրութիւն մը կը բարեփոխուի՝ երբ եղած փոփոխութիւնները պիտի ծառայեն լաւագոյն կերպերով այն վախճանին համար : որուն համար ընկերութիւնը կազմակերպուած է :

Քրիստոսի շնորհւած է իրեն՝ մինչև աշխարհիս կասարածն իր գոյութիւնը պահպանելու, մի՞թէ նա իւր իմաստուն օրէնքներովն ալ և անոնց դարուց ի դարս բարեփոխութիւններով և խրաքանչիւր ազգի ուղին հետ ձեւափոխելով իր օրէնսդրական վարչութիւնը՝ չէ՞ սպրած այսքան տարիներ և պիտի ապրի և գործէ, քանի որ այլ իր ներքին զօրութիւնն և զարգացուցչի սլոն իւր հետ պիտի կրէ: Քրիստոսի ճշմարիտ էլիկեղեցին ոչ երբեք շեղած և կամ փոփոխած է Ս. Գրոց սկզբունքները, սակայն միշտ փոփոխած է և օր ըստ օրէ ալ կր փոփոխէ այն կանոնները, որոնք այլ հիման վրայ հաստատուած էին և են: — Այսպէս փոփոխուեալ (իւր լոկ օրինակ՝ երկրոր ցանկէ մը քանի մը հատ յիշեմ) մեղքերն ապաշխարելու կանոնները, մեղմացուց և կամ վերցուց նախկին դարերու խիստ պահեցուցութիւնները, համառօտեց և կամ յապաւեց ժամատացութեանց համար սահմանուած ազօթքները, ժամանակի և երկրի պահանջման համեմատ՝ թոյլատրեց կամ արդիւնք ամուսնացելուց քահանայացուներ, ամբոփեց ամուսնութեանց համար հաստատուած արեւակցութեանց արգելները, և այլն: միւս կողմանէ ալ՝ հնոյն և յապաւածին տեղ՝ այնպիսի նորանոր օրէնքներ որոշեց, որոնք կարող են զան իւրաքանչիւր դարուց ազգաց մէջ գոհացրնել զարգացեալ մարքերու պահանջները: Իրեն բարեփոխած օրէնքներն և զարգացուցած կանոնագրութիւնն՝ այն ազգերէ և այն երկիրներէ միայն չեն ընդունուած, որոնք ցաւալի սգիտութեան մը մէջ սաղարուած՝ չեն հասած դեռ այն մասնորական զարգացման սասիճանին՝ որ այլ բարեփոխութեանց պէտքն զգան և անոնց բարերար ազդեցութիւնը վայելն: Ինչո՞ւ համար կարգ մը վարչական հիմնօրեայ Հաստատութիւնք, որոնք կպած կառչած են դեռ իրենց միջնադարեան օրէնսդրութեանց վրայ, և չեն հանդուրժեցր զրախեց մ՝անցամ սպիտեցնելու և կամ աւելցնելու, որով չեն սզեր բարեփոխուիլ, ինչն կը մտաբերեմ՝ ամէն ջանք ի գործ կը դնեն՝ որ մասնորական զարգացումը չտարածուի և չընդհանրանայ իրենցմէ

կառավարուող անդամաց մէջ, բայց եթէ այն պատճառաւ միայն՝ որ իրենց հիմնօրեայ օրէնքները ազդեցութիւն կարենան ունենալ այժմեան հպատակաց վրայ, զանելով զանոնք այն վիճակի մէջ՝ ինչ վիճակով կ'սպրէին այն հպատակները՝ որ գոյութիւն ունէին այլ օրինաց հաստատութեան ստեղծ: Հետեւաբար այլպիսի օրէնքները պաշտպանողք և անոնցմով ընկերութիւնը կառավարել ուղղունքն՝ օրինաց յառաջագնէմ զարգացման տեղ՝ օրինապահից յետադիմական սկզբութիւն մը պահպանել կամ տալ կը ջանան, որով մի միայն կարող պիտի ըլլան զսպել իրենց հպատակները, սակայն առանց կարող ըլլալու զանոնք հաղորդակից ընել այն ամէն բարեիքներուն՝ որ մտքի ու որսի զարգացմանէն յտանջ կու գան: — Այդպիսի գրութիւն մը՝ ի հարկէ բնական միջոցներով միայն կրնայ գործարդուիլ: Բայց այլ միջոցները ճիշտ ժամանակ արդեօք կրնան զարգացման ուժին զէմ գնել:... Զորեղ և հսկայ Ռուսիան՝ այլօր՝ մեզի գոհացուցել և համոզել պատասխան մը կու տայ նաեւ իրեն վաղուան վիճակակիցներուն համար:

\*  
\*\*

Մեծամեծ քաղաքական և կրօնական Հաստատութեանց սահմաններէն՝ ամբոփելով խօսքս մեր ազգին մէջ եղած վարչական Հաստատութեանց վրայ, օրինաց բարեփոխութիւնն անհրաժեշտ է, կր կրկնեմ, որպէս զի կաղ ի կաղ ընթացք մը չունենանք, և զարգացման հետ հակասանալի շրջանք, որպէս զի այլպիսի Հաստատութեանց տեսողութիւնն սպահալուի, և հպատակող անդամներն բնական հաստատութեան մը մէջ գրտնուին՝ զիրենք կառավարող օրինաց հետ:

Թող շտարակուսին այլ Հաստատութեանց վարչները: միջին ճանապարհ չկայ, կամ բարեփոխուիլ կամ մահ: Առաջինէն խորշոյներն աւ երկրորդին մտայնողներն են անոնք՝ որ կր կազան: Միտքն են՝ որ կր նմանին հին տեքնութեան ժառի կոճի մը, որուն վրայ սապիտ անպին դեռ քանի մը գեղնորակ սաղարթներ ցոյց կու տան թէ բու

լորովին աննդհնէ՛զ գրկուած ու շարքած չէ այլ բռնը, բայց գոսացումը աւելի կամ պակաս ժամանակի մը խնդիր է: Ա՛նոնք են՝ որ կը նմանին աշնան վերջին օրերուն առուակնհրուն, որոնք ցոյց կու տան ջրոյ գանդաղաշարք հստում մը, որ արեգական գազջ ջերմութենէ մը կէս ի կէս սնունդ կ' առնու, ջերմութիւն մը սակայն՝ որ քանի մ' օրէն ամենեւին պիտի չազդէ իր վրայ, և ինք պիտի պատապարտուի ստուոցի մէջ մեռնելու: Ա՛նոնք են՝ որ կը նմանին չին լեզուի մը, որ չուզելով իւր մէջ ընդունիլ նորանոր գիտեբու և գաղափարներու բացայայտիչ տճեր ու դարձաւածներ ու բառեր, անհասկանալի պիտի մնայ ժամանակին՝ հետ ապրող ու աճող մարդիկներէն, որոնք ապստամբելով իւր օրէնքներէն՝ պիտի կազմակերպեն նոր լեզու մը, որ իրենց պէտքերը լեցընէ օգտակար ժառանգութեամբ, փոխանակ հնոյն՝ որ իր անփոփոխութեան մասնուած՝ մեռած լեզունհրու բախտին պիտի մասնակցի:

Թող չլխտն չլիհհրոսին վարչութեանց գլուխ եղողներն. օրինադրութեան բարեփոխութիւն մը (այսինքն՝ անխախուս սկզբունքներու վրայ հիմնուած՝ կանոնադրական պատահականութիւններու՝ ժամանակին ոգւոյն և պահանջմանց համաձայն կրճատումներն ու յաւելումները) երբեք ընկերութեան մը փաստ չեն բերիր, այլ անոր կենդանութիւնը կը պահեն, գործունէութիւնը կը զօրացընեն և արդիւնաւէտ կը դարձընեն. այդ ընկերութեան ներկայն՝ անցեալին վրայ կը պատաստեն՝ ապագային աւելի բնօրի և առատ պատուներ արբատարելու. ըլլայ այդ ընկերութիւնը՝ Քաղաքային-Վարչութիւն մը, ըլլայ Հոգեւորական-Ընկերութիւն մը, ըլլայ Ռեսուրսական-Համախմբութիւն մը, ըլլայ Դպրոցական-Հաստատութիւն մը, և կամ ո՛ր և իցէ նպատակի համար յորինուած կազմակերպութիւն մը: — Ինչո՞ւ համար նոր կառուցուած քաղաքական և կամ կրօնական Հաստատութիւնը՝ միշտ հնրեղն աւելի և յանկարծական ոյժ մը, գործունէութիւն մը, աճում մը ցոյց կու տան: Միտի պատճառը պէտք է փնտսել այն իրողութեան մէջ, որ այդ նորահաստատ ընկերութեան կանոնա-

գրութիւնները համաձայն են բոս ամենայնի մտաւորական զարգացման կամ համոզման կամ բորոնողութեան, զոր ունին այդ կանոնաց հպատակող անդամներն: Մի՞թէ այս երեւոյթը ճշմարտուած չէ՞ միշտ, (չուզելով յիշել ուրիշ տեսակ ընկերութիւնները), վա՛նական—Միտարանու խոսակցութիւնը, որոնց բարոյական ուժին և կրօնական հոսանքեան սակցարը՝ գրեթէ միշտ իրենց հիմնադրին ժամանակակից է և կամ անոր մերձաւոր, մինչդեռ քանի՞ հնանան՝ այնքան ալ այդ ընկերութիւնը կը կորսընցընեն իրենց սոկէպարեան փայլը, եթէ երբեմն երբեմն կամ դարձե՛զար բարեփոխութեան չենթարկեն իրենց Սահմանադրութիւնները:



Մինչև հոս ըսածներս կը վերաբերէին որ և իցէ ընկերութեան մը կադայուն սկզբնական պատճառին, որ է՝ ինչպէս զուրցեցի՝ Սահմանադրութեան մը կամ հիմնական սկզբանց թերութիւն ունենալն, և կամ թէ նոյն իսկ լաւ կազմակերպուած և անթերի սկզբունքներու վրայ հաստատուած օրէնսդրութեան մը՝ ժամանակին զուգընթաց և մարդկանց մտքերու զարգացման համեմատ ինքզինքը բարեփոխութեան չենթարկելը, որով բարոյական աւակործիզմ մը տեղի կ'ունենայ ընդ մէջ Սահմանադրութեան մը և անոր ուղղութեան հետեւող մտքերու: Սակայն կադալու այս սկզբնապատճառէն դուրս՝ կան ուրիշ շատ բազմաթիւ երկրորդական կամ կողմնակի պատճառներ, որոնք իրենց աւելի կամ նուազ ազդեցութեամբ՝ պատճառ կը պահան նոյն իսկ լաւ կազմակերպուած և լաւ բարեփոխուած սահմանադրութիւն մ'ունեցող ընկերութեանց ալ կադ ի կադ ընթացքին:

Այս կողմնակի պատճառները (որ Սահմանադրութեան ներքինէն դուրս՝ արտաքին պատճառներ են), յարաբերութիւն ունին շատ անգամ այս ինչ կամ այն ինչ ազգայնութեան կամ աեղական բնիկ սովորութեանց, սոհմական ախաւարութիւն գարձած յատկութեանց, աեռակ մը բնածին ըսեմ պատկասութեանց հետ, որոնք աւելի կամ նուազ

ազգեցութիւն կ'ունենան այդ Սահմանադրութեան օրէնքներու գործադրութեան վրայ : Խօսքը շատ պիտի երկարւր՝ հիմէ ուզէի մի առ մի մէջ բերել այդ երկրորդ-կարգի պատճառներն, ու գործնական կամ պատմական օրինակներով ու փաստերով անոնց վրայ խորհրդածել\* . ուստի զանց ընելով միասեր՝ կը յիշեմ միայն մէկը , որ կրնամ բնել՝ դժբախտաբար տեսակ մը սեփականութիւն գործած է ընդհանրապէս արեւելեան ազգերու համար , և յատկապէս մեզի՝ Հայերուս . ըսել կ'ուզեմ կանոնաց յարգուելի պակասութիւն , որ առաջ կու գայ հեղինակութիւն ձևակերպելու և կամ յարգելու չուզելու :

Դիտած չէ՞ք , արեւելեան քաղաքներու մէջ ապրողներ , որ երբ դեռ ութ կամ տասը սարեկան հայ կամ թուրք կամ յոյն , և այլն , երեխաներ իրարու մէջ կոխ ունենան , իսկոյն « Ան սիլ է՝ որ ... » կամ « Գուն սիլ կ'ըլլաս՝ որ ... » խօսքերով կը սկսին մենամարտին . մինչդեռ շատ հեղ դիտեր եմ եւրոպական զանազան քաղաքաց մէջ , որ միւրոյիչեալ հասակով նոյն իսկ փողոցի սրի-կայիկներ , նմանօրինակ պարագայից մէջ՝ « Իրաւունքն իմն է ... » կամ « Գունս ա-նիրու ես ... » խօսքերով վէճի և կոտի կը բռնուին : Մեծցուցէք հասակները , և մեծցուցէք վէճերը ... սակայն սկզբունքը չի փոխուիր . մեծ արեւելցին ալ , մեծ հայն ալ՝ տեղն եկած ասեն՝ նոյնպէս պիտի գոչէ իւր ախոյնին . « Գուն սիլ կ'ըլլաս՝ որ ... » կամ « Ան սիլ է՝ որ ... » , մինչդեռ մեծ-ցած եւրոպացին՝ պիտի բողոքէ՝ գոչելով « Բայց այդ բրածոք իրաւունք չէ ... Բայց օրէնք կը գատապարտեն զքեզ » : ... Օրէնք յարգելը , հեղինակութեան գլուխ ծռելը՝ եւրոպացին կարծես մօրը կաթին հետ ծծած է , ընդհակառակն արեւելցին և մանաւանդ Հայերը՝ կարծես ինքնօրէնպարական ծնած ու սնած ենք , և շատ անգամ նոյն իսկ մեր կանոնած օրէնքները՝ առաջին շարքսոյն ու չարհոզըր մենք կ'ըլլանք . — Թող բնու իսկ

առհմաստիքի մը կամ թթուած անձնասիրի մը զգացմանց՝ միւրասրանք չազդէ մերոյիչեալ քաղաքատեղիւնս , որ հազարաւոր ապացոյցներով կրնայի շուտփեղի գարձընել ... Վէճք մը ցոյց տալը՝ միւրաւորին պատուոյն գալիլ ըսել չէ , այլ անոր օգուտն ուզել է . քաղաքատեղիւն մը՝ նպատակ չունի միշտ՝ մէկ կողմին եպերումը , այլ շատ անգամ զէպ ի բարին նախանձաւորութիւն մ՝ ար-թընցընելու ջանք մ'է . և ոյ որ չի փափաքիր իր սահմանցաց պատիւը բարձրացընել՝ բարւոյն նախանձաւոր ընելով զանոնք . այն պիտի բնութեան և բարկութեան հրէջ մը պէտք է համարուի :

\*  
\*\*

Եթէ կ'ուզէք ուրեմն ( և ի՞նչպէս կարելի է չուզէք ) , ո՞վ հայազգի քաղաքային և կրօնական և ուսումնական և կրթական Հաստատութիւններ , որ ձեր ապագայ կեանքը ապահով ըլլայ , պէտք է որ ձեր Սահմանադրութեանց օրէնքները մերքինէք , և տեսնէք թէ ունի՞ն արդեօք հիմնական սկզբանց թերութիւններ կամ միտութիւններ , և օր առօր պէտք է ջանաք զանոնք լրացնելու , ուզողելու և բացայայտելու :

Եթէ չէք ուզեր որ ձեր կեանքն առժամանակեայ ըլլայ և կտր ի կտր առաջ զնաք՝ մինչեւ որ օր մ'ալ անհրաժեշտ կործանուիք , պէտք է որ ժամանակին զարդացման հետ և համաձայն , դուք ալ զարգացնէք և բարեփոխէք ձեր Սահմանադրութեանց օրէնքները , անխախտ պահելով անոնց բարոյական և կրօնական հիմերը , որ բաւական են լիովին՝ չայլափոխելու համար ձեր ընկերութեան ոգին և նպատակը :

Եթէ չէք ուզեր որ ձեր ընտիր սկզբունքներու և բարեփոխուած կանոններու վրայ կազմակերպուած Սահմանադրութիւնը՝ մեռած գիրք մը մնայ , պէտք է որ յարկէք այդ կանոնները , վրէժնդիր ըլլաք անոնց պահպանութեան , և ամէն գործոց և ինդրոց մէջ՝ անոնց հեղինակութիւնը վճատու ճանչնաք , և ոչ թէ ձեր կամահաճոյ և քմահաճոյ պահանջուներն և ընդլայնուներն :

Որ և իցէ ընկերութեան մը բարգաւաճ .

\* Այդ կողմնակի կրօն պատճառներու վրայ՝ գուցէ ուրիշ Արտաթիւրու մէջ առիթ ունենամ գրելու :


ման գաղտնիքը՝ կանոնադատարեան լիտեռն վրայ կը դառնայ, ինչպէս ընդհակառակն աւ մէն ընկերութեանց խանգարման գաղտնիքն ալ անկանոնադատարեան ստնակին վրայ կը շրջի :

Այս վայրկեանիս յարմար ժամանակ միտքս կու գայ անմոռանալի Գրիգոր Արծրունու այն այս մասին տասնեակ մը տարիներ առաջ գրած տողերը, մեր ազգին վանականաց կամ հոգեւոր հիմնարկութեանց ուղղած պատուէրները, որոնք սակայն լու կ'ըլլար սկիզբի տառերով գրոշմուէրն նաեւ ամէն մէկ Հաստատութեանց Սահմանադրերուն ճակատար, կը վերանորոգեմ եւ այլ տողերի այստեղ՝ իր բն մինչեւ հիմայ գրածներու պատշաճ վերջաբան մը. « Մեր հոգեւորականութիւնը եւ հոգեւոր հիմնարկութիւնները, իր բն այնպիսի մարմիններ՝ որ արգէն հոգեւորական կնիք են կրում իրանց վրայ, նոյն իսկ իրանց շահի տեսակէտից, անպայման կարելք ունեն խիստ դիտարկելու պահելու՝ իրանց բոլոր

գործառնութիւնների մէջ, եթէ չեն ուզում վերջնականապէս խախտելու իրենց գոյութեան հիմքը: — Գիտցիցիլեա ստեղծով մենք հասկանում ենք սահմանադրական տրդար յարաբերութիւնների կտայ, որ պահանջում է իշխանութիւնը՝ ճանաչել ստորագրեալի իրաւունքը, իսկ ստորագրեալից՝ յարգել իշխանութիւնի վերջը »: ... « Եթէ մեր հոգեւորական պատակարար եւ հոգեւոր հիմնարկութիւնները ուզում են իմանալ իրանց անկման եւ թուլութեան գլխաւոր պատճառները, չպիտի մոռանան՝ որ այլ պատճառներից մէկն էլ է դիտարկելու ըստ ըստ ըստ ըստ, որ՝ մի կողմից՝ իշխանութիւններին պարձնում է կամայական, իսկ ստորագրեալներին՝ հաւատարմութիւն, եւ կամ հակառակը՝ ստորագրեալներին պարձնում է ծպտեալ իշխանութիւն, իսկ իշխանութիւն՝ ծիծաղելի ուշուշութիւն »: — « Մշակ. 1897, թ. 137 »:

Հ. Ա. ՏԻԳՐԱՆԱՅ

### Ա Ռ Ա Ծ Ք Ն Ա Խ Ն Ե Ա Ց



Այն օրն որ ի մօրէ կու ծնանէիր, ամէն ուրախանային, զու լայիր, էնց բան արտ՝ որ այն օրն որ մեռանիտ՝ ամենեքին լան, զու ուրախանաս:

Մարդն հոգի է ու լեզու. և լեզուն հոգոյն չարկամ՝ է. Թէ զհոգիդ կ'ուզես՝ զլեզուդ պահէ:

Թէ տասն խոռք բարի գիտես, զու զինն խօսեաց՝ զմին պահէ. Թէ խոռք շատ գիտեսաս՝ քիչ առա. զմէկն՝ հարիր մի ստել, զհարիրն՝ մէկ սաս:

Խօսքն մօտ գիտնաւորն՝ մեծ է, վասնզի յերկնից եկաւ. իսկ զու թեթեւ մի բաներ, Ձխօսքն գիտութեամբ պարտ է պաս ստել. սակալ կ'առել և ապա խօսել:

Լեզուն ճուղ ունի քան զօձու, զմէկն մարդարիս կու թափէ, զմէկն ժահր:

Ի սեւ ամպոյն և ի խելայեղ մարդոյն մի վախենար. այլ ի սպիտակ ամպոյն և ի խելօք մարդոյն:

Բանութեամբ բան ի հուն չեւանէ. այլ կակզութեամբ օձն ի ծակէն ելանէ:

